ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1952 Общественные науки

Ն. Վ. Հարությունյան

Husani ԵՐԿՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ուրարտական վիմագիր հուշարձաններում Husani *տեղանունը հիշատակվում է ոչ այնքան հաճախ։ Սակայն գոյություն ունեցող փաստական նյութը հետազոտողին բավական հնարավորություններ է ընձեռում այդ աշխարհագրական անվանը համապատասխանող պատմական տերիտորիայի տեղադրման հարցի մեկնաբանման ուղղությամբ։ Չնայած այդ հանգամանքին, այնուամենայնիվ ուրարտագիտական գրականության մեջ մինչև օրս այդ խնդրի լուսաբանմանը չեն նվիրվել անհրաժեշտ հետազոտություններ։*

Մյուս կողմից էլ հիշյալ հարցի ուսումնասիրությունը ավելի քան կարևոր է դառնում այն պարզ պատճառով, որ այն հնարավորություն է տալիս մեծ կամ փոքր հավանականության սահմաններում լուծելու Biani, Tariuni *և այլ երկրների աշխարհագրական տերիտորիաների հարցերը, որոնք նույնպես անհրաժեշտ լուսաբանման կարիք են զգում։*

Hušani[1] *տեղանունը հիշատակվում է ուրարտական թագավոր Արգիշտի I-ի խորխորյան տարեգրություններում։ Իր թագավորության առաջին տարվա երկրորդ արշավանքի նկարագրության մեջ Արգիշտին պատմում է, որ ինքը արշավանք է ձեռնարկել դեպի Դիաուխի երկիրը. նվաճելով Շերիազի երկիրը՝ հասնելով մինչև Պուտե քաղաքը, որը հարևան էր Բիա և Խուշա երկրներին, հպատակեցնում է Ճարիու երկիրը. ուղևորվելով Զարախա երկիրը, հասնում է Ուզինարիաարնա քաղաքին և Սիրիմուտարա լեռանը։ Այնուհետև իրեն է ենթարկում Իգանի երկրի Մակալտու քաղաքը և գալիս Էրիախի ցեղի երկիրը. ուղևորվում է դեպի Ապու (կամ Արու) երկիրը և նվաճում Ուիտերու երկրի Ուրեյու թագավորանիստ քաղաքը[2]։*

Խորխորյան տարեգրության վերոհիշյալ հատվածի մեջբերումից հետևում է, որ Խուշա Husani *տեղանվանը համապատասխանող աշխարհագրական տերիտորիան անհրաժեշտ է որոնել այն տեղանունների տերիտորիաների սահմանամերձ շրջաններում, որոնց հետ միասին նա հիշատակվում է։ Բայց քանի որ տվյալ դեպքում սույն հետազոտության առարկան հանդիսացող Խուշա տեղանունը հանդես է գալիս մի կողմից Դիաուխի*

---

[1] *Աշխարհագրական անունների վերջավորություններում շատ հաճախ հանդես եկող* —ni (ni/e) *և* —hi (ni/e) *ցուցիչները, մեր կողմից դիտվում են որպես արսոլուտ հոլովի կամ ստացական ածականի վերջավորություններ։ այդ պատճառով էլ տեղանունների հայերեն լեզվով տառադարձումների ժամանակ մենք սովորաբար խուսափում ենք արտահայտել այդ վերջածանցները։ Տես նաև* Гр. Капанцян, Хурритские слова армянского языка, Известия АН Арм. ССР (Общественные науки), № 5, 1951, *էջ 11։*

[2] *Խորխորյան տարեգրություն,* I, *6—12։*

և մյուս կողմից Զաբախա ու Իգանի տեղանունների միջև, ըստ որում վերջիններիս պատկանող աշխարհագրական տերիտորիաների հարցը բավականաչափ ուսումնասիրված է ուրարտագիտական գրականության մեջ, ուստի հասկանալի է, որ հենց նոր հիշատակված Դիաուխի, Զաբախա և Իգանի տեղանունները հետազոտողին կարող են հնարավորություններ տալ Խուշա, ինչպես նաև Բիա և Տարիու տեղանուններին համապատասխանող աշխարհագրական տերիտորիաների որոշման խնդրում։

Ինկատի ունենալով վերոհիշյալ փաստարկումը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել Դիաուխի, Զաբախա ու Իգանի տեղանուններին համապատասխանող աշխարհագրական տերիտորիաների լուսաբանման հարցի վրա և այնուհետև միայն տալ մեզ հետաքրքրող Խուշա տեղանվան պատմական տերիտորիայի տեղադրումը։ Այս կապակցությամբ ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ չնայած Դիաուխի աշխարհագրական անվանը համապատասխանող տերիտորիայի տեղադրման մասին մասնագիտական գրականության մեջ հայտնվել են մի շարք կարծիքներ, այնուամենայնիվ այդ ուղղությամբ հայտնված կարծիքների մեծ մասը հիմնականում չեն բացառում մեկը մյուսին[1]։ Պրոֆ. Գր. Հ. Կապանցյանը հիշյալ երկիրը տեղադրում է Արածանի գետի միջին հոսանքում՝ Հաշտիանքում[2]։ Պրոֆ. Բ. Ի. Պիոտրովսկին Դիաուխին (ասսուր. Դայաեն) նույնացնում է անտիկ գրողների հիշատակած տաոխների և հետագա շրջանի Տայքի հետ[3]։ Գ. Ա. Մելիքիշվիլին Դիաուխի երկրի տերիտորիան տեղավորում է Էրզրումի շրջանում, որը, սակայն, նրա կարծիքով, հավանաբար, հանդիսացել է Դիաուխի երկրի հարավային սահմանը[4]։ Ի. Մ. Դյակոնովը իր կազմած քարտեզի վրա Դիաուխի երկիրը տեղադրում է Ճորոխ գետի հովտում[5]։

Ուրարտական սեպագիր հուշարձանների մատուցող փաստական նյութի ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ չի բացառվում Դիաուխի երկիրը դիտել որպես բազմաթիվ ցեղերի մի ամբողջական միություն (մանավանդ Մանազկերտի արձանագրության մեջ նա կոչվում է taraie «հզորագույն»), որը գրված լինի լայնատարած տերիտորիա՝ սկսած Մանազկերտ քաղաքի շրջանից մինչև Բասեն և նույնիսկ նրանից էլ ավելի հյուսիս։ Բայց և այնպես մենք հակված ենք կարծելու, որ դիաուխյան ցեղերի միության հիմնական տերիտորիան տարածված է եղել հայկական վաղ շրջանի մի կողից Տուարածատափ և Բագրևանդ (արևելքում) և մյուս կողմից Խորձեան և Դերջան (արևմուտքում) գավառների միջև, ըստ որում նրա հարավային կամ հարավ-արևելյան սահմանը, հավանաբար, համընկել է Մանազկերտ քաղաքի շրջակայքի հետ։

Ինչ վերաբերում է Զաբախա տեղանվան տերիտորիայի տեղադրման հար-

---

[1] Դիաուխի երկրի մասին բավականաչափ հիշատակություններ կան ոչ միայն ուրարտական, այլև ասսուրա-բաբելական սեպագիր հուշարձաններում։ Վերջիններում նա հանդես է գալիս Դայաենի ձևով։

[2] Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 26, 41։

[3] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 27։

[4] Г. А. Меликишвили, Диаухи, Вестник древней истории, 1950, № 4, էջ 27։

[5] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, 1951, № 2, էջ 264—265, տես քարտեզը։

ցին, ապա ուրարտագիտական գրականության մեջ այն սովորաբար համեմատվում է վրացական Ջավախետի (հայկական աղբյուրների Ջավախք) տեղանվան հետ[1], որը գտնվում է վրացական ժամանակակից Ախալքալաքի քաղաքի շրջանում։ Այս վերջինի կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ուրարտական պետության կազմի մեջ մտնող երկրների տեղագրման հարցի ուսումնասիրությունը հետազոտողներին բերել է այն համոզմունքին, որ ուրարտական շրջանի Զարախա երկրի աշխարհագրական տերիտորիան հնարավոր է, որ գտնված լինի ոչ թե պատմական Ջավախետիի տերիտորիայում, այլ նրանից մի փոքր հարավ-արևմուտք։ Պրոֆ. Գր. Ղափանցյանը ևս այդ կարծիքին է։[2] Գ. Ա. Մելիքիշվիլին այդ կապակցությամբ գրում է. «Պարզ է, որ այդ արշավանքի[3] ժամանակ Արգիշտին Դիաուխիից գնացել է հյուսիս-արևելյան ուղղությամբ, այդ պատճառով էլ Զարախա երկիրը անհրաժեշտ է որոնել Զալդիր լճից դեպի արևմուտք կամ հարավ-արևմուտք, այսինքն՝ մի փոքր դեպի հարավ (հարավ-արևմուտք) վրացական Ջավախ-էտի մարզից, որի անվան մեջ, ինչպես քանիցս նշվել է մասնագիտական գրականության մեջ, պահպանվել է հնագույն Զարախայի անունը։ Բացառված չէ այն հնարավորությունը, որ այն ժամանակ արդեն Զարախա երկրի տերիտորիան հյուսիսային ուղղությամբ հասած լինի մինչև Ջավախետի (ժամանակակից Ախալքալաքի քաղաքի շրջանը)»[4]։

Մեզ թվում է, դժվար է պնդել, որ եթե մի հնագույն տերիտորիա ավելի ուշ ժամանակներում պահպանել է իր տեղանունը՝ իր նույն հնագույն ձևով կամ աննշան հնչյունական փոփոխություններով, ապա նրա հետ միասին նույնն են մնացել նաև այդ անվանը համապատասխանող տերիտորիայի սահմանները։ Աշխարհագրական այդ անվանը համապատասխանող տերիտորիան հետագայում, իհարկե, կարող էր ինչպես մեծանալ, նույնպես և փոքրանալ և անգամ դադարել գոյություն ունենալուց որպես աշխարհագրական տերիտորիալ մեծություն՝ մտնելով իր ժամանակի այս կամ այն ավելի հզոր պետության կազմի մեջ։

Եվ իսկապես, եթե ուրարտական շրջանի Զարախա երկրի անվան ստուգաբանական կապը հետագա շրջանի Ջավախետիի անվան հետ արդարացնում է իրեն, ապա ելնելով հիշյալ արշավանքի տվյալներից, մենք հակված ենք կարծելու, որ Զարախա երկրի տերիտորիան, ըստ երևույթին, գտնվել է Զալդիր լճից դեպի հարավ-արևմուտք (կամ հասել է մինչև այդ մասը), քանի որ այդ արշավանքի ժամանակ Զարախա երկիրը նվաճելուց հետո, ուրարտական զորքերը հասնում են մինչև Ուզինարիտարնա քաղաքը և Սիրիմուտարա լեռը և այնուհետև հպատակեցնում Իգանի երկրի Մակալտու քաղաքը, որի աշխարհագրական տեղը որոշվում է Սարդուրի, Ար-

---

[1] Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 45—48։

[2] Նույն տեղում, էջ 47։

[3] Հեղինակն ի նկատի ունի Արգիշտի I-ի թագավորության առաջին տարվա երկրորդ արշավանքը։ Տես Խորխորյան տարեգրություն, I, 5—12։

[4] Г. А. Меликишвили, Диаухи, Вестник древней истории, 1950, № 4, էջ 27, ծանոթագրություն 4։

գիշտիի որդու, Զալդիր լճի հարավային ափին գտնվող Դաշ-կերպի գյուղի մոտ հայտնաբերված արձանագրությամբ[1]։

Սույն հետազոտության առարկա հանդիսացող Խուշա (ինչպես նաև Բիա) տեղանունը ոչ միայն խորխորյան տարեգրության վերոհիշյալ կոնտեքստում, այլև ուրարտական այլ հուշարձաններում սովորաբար հանդես է գալիս Դիաուխի տեղանվան հետ միասին[2]։ Սարդուրյան տարեգրության մեջ Խուշա տեղանունը հանդես է գալիս ստացական ածականի ձևով, որը կազմված է արսոլուտ հոլովի հոգնակի թվից, այսինքն՝ Husa-lhi[3] գրությամբ, որը բառացիորեն նշանակում է «խուշայցիներին պատկանող»։ Նույն տեղում նրա հետ միասին հիշատակվում է նաև Կուլխա տեղանունը, որը մասնագիտական գրականության մեջ սովորաբար համեմատվում է Սև ծովի հարավ-արևելյան մասում գտնվող պատմական Կոլխիդայի անվան հետ[4]։ Husa-lhi երկրի թագավորը այստեղ հանդես է գալիս Խախ(ա) անունով։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ պրոֆ. Ղափանցյանի կարծիքով խորխորյան տարեգրության Խուշա տեղանունը ընդհանուր ոչինչ չունի սարդուրյան տարեգրության Խուշա-լխի տեղանվան հետ, քանի որ նա Խուշա տեղանունը համեմատում է հետագա շրջանի Հոսանան գյուղի (Նազիկ լճից դեպի արևմուտք, նրանից մոտավորապես 20 կմ հեռավորության վրա) և նրա հետ հիշատակվող Տարիսա տեղանունը հետագա Տարոնի աշխարհագրական անունների հետ[5]։

Վերոհիշյալ մեջբերում արված փաստերից, ըստ երևույթին, հետևում է, որ Խուշա, ինչպես նաև Բիա երկրների տերիտորիաները անհրաժեշտ է որոնել Կուլխայից (պատմական Կոլխիդայից) դեպի հարավ։ Դուցե այդ մասին են վկայում նաև Արգիշտի I-ի թագավորության չորրորդ տարվա երկրորդ արշավանքի տվյալները (խորխորյան տարեգրություն, II, 25, 40—43), որոնց համաձայն վերնագրային կոնտեքստում (заглавная декларация) հիշատակվում է Էտիու և այլ անհայտ (տեղանունը տուժված է) երկրների հպատակեցման մասին։ Այդ տարվա առաջին արշավանքի տեքստը, դժբախտաբար, չի պահպանվել, իսկ երկրորդ արշավանքի նկարագրության մեջ ուրարտական թագավորը պատմում է Ուբուրդա, Ուիշուշի և Խախ(ի) երկրների նվաճման մասին։ Հնարավոր է, որ հենց նոր հիշատակված երկրների տերիտորիաները որոնել Էտիու երկրից դեպի արևմուտք, որի արևմտյան սահմանը, ըստ երևույթին, հանդիսացել է Ղարսի շրջանը։ Խախ(ի), ինչպես նաև Ուբուրդա երկրների տեղանունները հանդես են գալիս հոգնակի թվի սեռական հոլովաձևով, ուստի հնարավոր է, որ այդ ապացույց է այն բանի, թե ուրարտական արձանագրողը տվյալ դեպքում

---

[1] Н. Я. Марр. Надпись Сардура II, сына Аргиштия, в Даш-керпи на Чалдырском озере, Записки Кавказского музея, серия В—1, 1919, էջ 1—38։

[2] Journal of the Royal Asiatic Society, vol. XIV, part 3, London, 1882, XLV, 1—1.

[3] Н. Я. Марр и И. А. Орбели, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петербург, 1922; M. Tseretheli, Die neuen ḫaldischen Jnschriften Konig Sardurs von Urartu, Heidelberg, 1928, C, 2—3.

[4] Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 42։ Г. А. Меликишвили, Диаухи, ВДИ, 1950, № 4, էջ 29։

[5] Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 41—42։

ինկատի ունեցած լինի Խախ(ի) երկրի բնակիչներին, այսինքն՝ խախցիներին։ Այս կապակցությամբ միանգամայն ուշագրավ երևույթ է, որ Խախ(ա) տեղանունը, ինչպես այդ մասին արդեն նշել ենք վերևում, հիշատակվում է նաև սարգուրյան տարեգրության (C, 3) մեջ, ըստ որում որպես խուշայդիների երկրի թագավորի անուն։ Ուստի այստեղից էլ ակամայից հարց է ծագում, թե խորխորյան տարեգրության խախցիների տերիտորիան արդյո՞ք նույնական չէ սարգուրյան տարեգրության Խուշա երկրի Խախ(ա) թագավորի տերիտորիային այն իմաստով, որ մի դեպքում տվյալ աշխարհագրական տեղանվան բնակիչների տերիտորիան, հավանաբար, անվանակոչվում է նրանց թագավորի անունով (խախցիներ—Խախ(ա) թագավորի երկրի բնակիչներ), իսկ մյուս դեպքում աշխարհագրական տերիտորիայի տեղանվամբ (Խուշա), ըստ որում վերջին դեպքում ակնարկվում է նաև, որ հիշյալ ինքնուրույն աշխարհագրական միավորը պատկանել է Խախ(ա) թագավորին։ Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Ն. Ադոնցը վկայում է Խախ անունով գյուղի գոյության մասին՝ հայկական միջնադարյան Եկեղեաց գավառում[1], որի տերիտորիան տարածված է եղել Եփրատ գետի վերին հոսանքում՝ Բարձր Հայքի Դարանաղի և Դերջան գավառների միջև։ Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ Խախ գյուղի անվանվան մեջ պահպանված լինի ուրարտական շրջանի Խախ-ի (=Խուշա) երկրի տեղանունը։ Եթե մեր կողմից բերված նմանօրինակ համեմատությունը կարող է համապատասխանել իրականության և գտնել թեկուզ փոքրագույն հավանականություն, ապա այդ դեպքում (Խուշա=Խախ-ի), ինչպես նաև Բիա, երկրների տերիտորիաները անհրաժեշտ է որոնել ավելի ուշ շրջանի Դերջան գավառի տերիտորիային սահմանամերձ տարածություններում, ըստ որում, հավանաբար, վերջիններիս հարավ-արևմտյան (կամ արևմտյան) մասում։

Hušani (=Hahani) երկրի աշխարհագրական անվան վերոհիշյալ համեմատության և նրան համապատասխանող տերիտորիայի նմանօրինակ տեղադրման օգտին են խոսում նաև խորխորյան տարեգրության (I, 5—9) տվյալները, որոնց համաձայն Արգիշտի I-ը իր թագավորության 1-ին տարվա 2-րդ արշավանքի ընթացքում ուղևորվում է Ռիաուխի երկիրը (Էրզրումից դեպի հարավ ընկած տարածությունը) ու գաղթնկեց անում նրա թագավորին և այնուհետև արշավելով դեպի արևմուտք՝ նվաճում է Շերիազի երկիրը ու հասնում Պուտե քաղաքը, որը հարևան էր Բիա և Խուշա երկրներին։ Վերջիններիս տերիտորիաները, ըստ երևույթին, ընկած են եղել Եկեղեաց գավառի արևելյան սահմանում։ Այնուհետև Արգիշտին ուղևորվում է դեպի հյուսիս-արևելք, որտեղ նվաճում է Տարիու երկիրը[2] և ապա Զաբախա երկիրը (Զալդիր լճից հարավ-արևմուտք ընկած տերիտորիան)։ Հիշյալ արշավանքի այդպիսի ուղղության և երկրների այդօրինակ տեղադրման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Զաբախայի նվաճումից հետո ուրարտական թագավորը հասնում է Ուգինարիտարնա քաղաքին ու Սիրիմուտարա լեռանը և հպատակեցնում Իգանի երկրի Մակալտու քաղաքը, որը, Դաշ-կերպիի արձանագրության տվյալների համաձայն, գտնվել է Զալդիր լճի հարավային մասում։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 20։

[2] Տարիու երկրի տերիտորիան, հավանաբար, տարածված է եղել Բասենից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք։

Մակալտու քաղաքի հպատակեցումից հետո ուրարտական զորքերը արշավում են դեպի հարավ և նվաճելով Էրիախի երկիրը[1] (այժմյան Լենինական քաղաքի շրջանը), ուղևորվում են դեպի Ապու (կամ Արու) երկիրը[2] և ապա նվաճում Ուիտերու երկրի Ուրեյու թագավորանիստ քաղաքը։

Կարծում ենք, որ Husani (=Haḫani) երկրի տերիտորիայի մեր կողմից վերը բերված տեղադրումը անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի նաև Ռիա, Տարիու և ուրարտական մյուս վիմագիր հուշարձաններում նրանց հետ միասին հիշատակվող այլ երկրների տերիտորիաների որոշման համար։

---

[1] Էրիախի երկրի տեղադրումը հաստատված է Ղանլիջայի արձանագրությամբ։ Տես М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, V, 3.

[2] Ապու (=Արու), ինչպես նաև Ուիտերու երկրների տեղադրման հարցի մասին մանրամասն կանգ կառնենք այլ հետազոտության մեջ։ Սակայն հիշատակության արժանի է, որ Արգիշտի I-ի թնկուզ այս արշավանքի տվյալներից պարզորոշ երևում է, որ Ապու (կամ Արու) երկիրը հանդիսացել է Էրիախի երկրին հարևան տերիտորիա, ուստի այստեղից էլ հիմնովին կորցնում է իր ուժը ուրարտական Ապուի և հետագա շրջանի Ապահունիքի նույնացումը Ն. Մառի կողմից։ Տես Н. Я. Марр и И. А. Орбели, Археологическая экспедиция, 1916 г. в Ван. Петербург, 1922, էջ 58—59։